ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏ ԳԵՆԵՐԱԼ ԳԵՈՐԳԻՈՒՍ ԱՆՏՈՆԱԿՈՊՈՒԼՈՍԻՆ

Սեպտեմբերի 1-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ Գեորգիուս Անտոնակոպուլոսի ղեկավարած պատվիրակությանը: Բարձրաստիճան զինվորականներին ուղեկցում էր ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանը:

Ողջունելով նախարարի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո հայ-հունական բարեկամական կապերն ամրապնդվում են տարբեր բնագավառներում, որոնք նպաստում են երկու երկրների զորացմանը՝ կարևորելով նաև համագործակցությունը երկու երկրների զինված ուժերի միջև:

«Եկեղեցին միշտ էլ հորդոր ու կոչ է ուղղելու իր զավակներին իր եղբայրների հետ միասին լինելու, որպեսզի թշնամիների կողմից նոր փորձություններ չներկայանան մեր ժողովրդին, և այդ վտանգների առջև մենք պետք է լինենք միասնական և եղբայրությամբ զորեղ»,- նշեց Նորին Սրբությունը:

Հունաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետը խորին շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ անդրադառնալով երկու երկրների զինված ուժերի միջև առկա սերտ հարաբերություններին ու ապագա երկկողմ ծրագրերին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, ՀՀ զինված ուժերի հոգևոր առաջնորդ Տ. Արշեն աբդ. Սանոսյանը և բարձրաստիճան զինվորականներ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սեպտեմբերի 11-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիրիայի Արաբական Հանրապետության լուսավորության նախարար Մահմուդ Աս-Սայեդի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու ժողովուրդների բարեկամության և կրթական ոլորտում հայ-սիրիական համագործակցության հեռանկարների մասին:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց Սիրիայի կառավարության բարյացակամ վերաբերմունքը հանդեպ սիրիահայ համայնքի, ինչի արտահայտություններից մեկն այստեղ գործող մեծ թվով հայկական դպրոցներն են:

Իր հերթին պրն Սայեդին բարձր գնահատեց հայ համայնքի դերը երկրի կյանքում: Մասնավորապես ընդգծելով հայ մասնագետների, այդ թվում հայ ուսուցիչների աշխատանքը՝ պրն Սայեդին նշեց, որ իր երկու զավակները ևս Դամասկոսի հայկական դպրոցի սաներ են:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Սիրիայի Ասորական Եկեղեցու միջև ձևավորված եղբայրական ջերմ հարաբերություններին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՇԱՎԻԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Սեպտեմբերի 14-ին Խաչվերացի տոնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շավիլի քաղաքապետ Ժան Լևենի գլխավորած պատվիրակությանը: Ֆրանսիացի հյուրերի կողքին պատվիրակության կազմում էին բազմաթիվ ֆրանսահայ ուխտավորներ:

Վեհափառ Հայրապետն անդրադառնալով հայ և ֆրանսիացի ժողովուրդների բազմամյա բարեկամությանը՝ ջերմորեն վերհիշեց իր այցը Շավիլ՝ 2001-ին Ֆրանսիա կատարած հովվապետական այցի ընթացքում:

Պարոն Լևենը շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ դրվատանքով նշեց ֆրանսահայերի, որպես այդ երկրի օրինակելի քաղաքացիների, նվիրվածությունը Ֆրանսիային: Քաղաքապետը շեշտեց, որ իրեն միշտ հիացմունք է պատճառել հայերի նվիրվածությունը Եկեղեցուն, ինչպես նաև նրանց անսասան հավատը, որի շնորհիվ հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում կարողացել է հաղթահարել բազում դժվարություններ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՏՎԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԼԱՆԴԱՍ ՊԱԿՍԱՍԻՆ

Մեպտեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Լիտվայի Հանրապետության նախագահ Ռոլանդաս Պակսասին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Լիտվայի նախագահին, ուրախություն հայտնեց նորանկախ Հայաստանի և բարեկամ Լիտվայի միջև զարգացող եղբայրական հարաբերությունների համար և համոզմունք հայտնեց, որ փոխհամագործակցությունն իր նպաստն է բերելու երկու երկրների զարգացմանը: «Մենք ուրախությամբ հետևում էինք Ձեր այցին և տեղեկանում այն հաջողությունների մասին, որ արձանագրում եք Ձեր երկրում»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ գոհունակություն հայտնելով նաև այն հոգածության համար, որ ցուցաբերում են Լիտվայի իշխանությունները հայ համայնքի նկատմամբ: «Շնորհիվ Ձեր ազնիվ հոգածության՝ լիտվահայ համայնքը հնարավորություն ունի կառուցելու հայկական եկեղեցի և զորացնելու ազգային-հոգևոր իր կյանքը»,- ասաց Նորին Սրբությունը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Լիտվայի նախագահը մասնավորապես նշեց. «Այս հանդիպումը Հայաստան կատարած իմ այցի բարձրակետն է: Ճափազանց խորը զգացմունք ես ապրում, երբ գիտակցում ես, որ գտնվում ես աշխարհի մի հատվածում, որ հազարամյակների պատմություն ունի»: Դրն Պակսասը բարձր գնահատեց Եկեղեցու դերը ժողովրդի կյանքում՝ մասնավորապես նշելով, որ հաջողությունները, որ արձանագրում է Լիտվան, հնարավոր են դառնում նաև Եկեղեցու հետ սերտ համագործակցության շնորհիվ:

Հանդիպման ավարտին Լիտվայի նախագահը եղավ Վեհարանի թանգարանում և Մայր Տաճարում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԺԱՆ ԼՈՒԻ ԹՈՐԱՆԻՆ

Մեպտեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վատիկանի պետքարտուղարության արտասահմանյան երկրների հետ հարաբերությունների քարտուղար արքեպիսկոպոս Ժան Լուի Թորանին՝ Անդրկովկասում Վատիկանի դեսպան և պապական նվիրակ Կլաուդիո արքեպս. Գուջերոտիի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ երկու Եկեղեցիների միջև առկա եղբայրական հարաբերություններին և վստահություն հայտնեց, որ դրանք պետք է շարունակվեն և բարի արդյունքներ բերեն երկու Եկեղեցիների հավատացյալներին: Հռոմի

Հովհաննես-Պողոս Բ Պապի գահակալության 25-րդ տարեդարձի առիթով Հայոց Հայրապետն իր բարեմաղթանքը հղեց Սրբազան Քահանայապետին:

Իր հերթին արքեպիսկոպոս Թորանը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար և Վեհափառ Հայրապետին փոխանցեց Հովհաննես-Պողոս Բ Պապի ողջույնները:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը և Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանը:

Նույն օրը Մայր Տաճարում, Ս. Պատարագի ընթացքում, Վատիկանի պատվիրակությանը ողջունեց նաև Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՆԵՐԳԱՂԹԻ, ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԲՆԻԿՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սեպտեմբերի 26-ին Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ավստրալիայի ներգաղթի, ազգությունների և տեղաբնիկների հարցերով նախարար Ֆիլիպ Ռադոկին և նրա գլխավորած պատվիրակությանը:

Վեհափառ Հայրապետն ուրախությամբ ողջունեց հյուրին, որի հետ ծանոթանալու առիթ էր ունեցել դեռևս անցյալ տարի՝ Ավստրալիա կատարած այցի ընթացքում:

Հանդիպման ընթացքում խոսվեց ավստրալահայ համայնքի և երկու երկրների բարեկամական հարաբերությունների մասին: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու և Ս. Էջմիածնի պատմությանն ու ներկայիս գործունեությանը: Իր հերթին պրն Ռադոկը ներկայացրեց իր երկրի կրոնական կյանքը:

Հանդիպմանը ներկա էին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը, Փառեն եպս. Ավետիքյանը, ՀՀ միգրացիայի և փախստականների վարչության պետ Գագիկ Եգանյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ